ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 10.08. 2021թ. ԹԻՎ 700-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 18 օգոստոս
2021 թ, (ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)
ժամը 12:00
Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ
Խ.Սիսակյան ՏԱ տնօրեն

Հայտեր բացող անդամներ
Տ.Ղուկասյան Ն և ԴԾ առաջատար ինժեներ

Հայտեր գնահատող անդամներ
Ա.Քալոյան ՇՊ ՏԲՇՊ գլխավոր ինժեներ
Ա.Կարապետյան Ն և ԴԾ պետ

Հանձնաժողովի քարտուղար
Հ. Հակոբյան ԻՊԳ բաժնի գնումների մասնագետ

Ա.Աղաջանյանը չմասնակցեց նիստին:

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/21 ծածկագրով <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ կարիքների համար <<Անտենային աշտարակի և ՄՌ սարքավորումների տեղակայման համար անհրաժեշտ կառույցների շինարարական, սարքավորումների և անտենային աշտարակի բեռնափոդադրման, ինչպես նաև մոնտաժման աշխատանքների>> գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացում:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները՝

1. <<ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ>> ՍՊԸ
2. <<Արտ Էներջիսերվիս>> ՍՊԸ
3. <<Ռեդինետ>> ՓԲԸ

Հրապարակվեց սույն գնման առարկայի նախահաշվային գինը՝ 33 192 360 ՀՀ դրամ:

Հայտարարվեց մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, առանց ԱԱՀ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

1. <<ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ>> ՍՊԸ-24 379 439 ՀՀ դրամ
2. <<Արտ Էներջիսերվիս>> ՍՊԸ-24 583 685 ՀՀ դրամ
3. <<Ռեդինետ>> ՓԲԸ-26 864 500 ՀՀ դրամ

Հանձնաժողովը արձանագրեց, որ նշված մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը բացառությամբ՝ <<ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ>> ՍՊԸ և <<Ռեդինետ>> ՓԲԸ կողմից Հավելված 2.1 – ը չի համապատասխանում սույն հրավերով սահմանված պայմաններին այն է՝

շինարարական աշխատանքների գնման դեպքում՝

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի **տաս տոկոսից**:

<<ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ>> ՍՊԸ կողմից ներկայացված հավելված 1.1-ում ներկայացնել օգտագործվող **սարքերի և սարքավորումների** նկարագիրը:

<<Արտ Էներջիսերվիս>> ՍՊԸ ներկայացնել հավելված 1.1-ը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և համակարգի միջոցով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:
Անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 20.08.2021.թ. ժամը 16.00-ին:
3. Սույն որոշման մասին տեղեկացնել շահագրգիռ անձանց:

Խ. Սիսակյան		Հանձնաժողովի նախագահ
Ա. Կարապետյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Քալոյան		Հանձնաժողովի անդամ
Տ. Ղուկասյան		Հանձնաժողովի անդամ
Հ. Հակոբյան		Հանձնաժողովի քարտուղար